



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ
ՄԱՐՏԱԿԱՆ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԳԵՆԵՐԱԼ
ՄԱԴԱԹՈՎ

ՍՍՈՄ ԳԻՏՈՒԹ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վ. ԹԵՐԶԻԲԱՇՅԱՆ

2961

ԳԵՆԵՐԱԼ - ԼԵՅՏԵՆԱՆՏ

Վ. Գ. ՄԱԴԱԹՈՎ

704
9




ՍՍՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ,
Վ Ր Ե Վ Ա Ն 1942

Սերիա՝ խմբագրութեամբ ակադ. Հովսէփ ԹԲԲԵԼՈՒ

Հասցիք՝ Եկաբիչ Մ. Ն. ՄՈՒՆԻ





Իրենց ազատագրական դարավոր պայ-
քարի ընթացքում, հայերը շատ անգամ
գլխել են ուստական հղոր պետութեանը,
օգնութեան խնդրելով նրանից հայ ժողո-
վւրդին ստրկացնող արեւելյան բռնակալնե-
րի դեմ :

Ղարաբաղի և Ձանգեղուրի հայ մելիք-
ները, որոնք դեռևս XVIII դարի վերջերին
պահպանում էին իրենց անկախութեանը
Արցախի և Սյունիքի (այժմյան Ղարաբաղի
և Ձանգեղուրի) անմատչելի լեռներում,
պատգամավորութեաններ էին ուղարկում
Պետերբուրգ (ներկայիս Լենինգրադը) : Նը-
րանք խնդրում էին ուստ պետութեանից
դժբաղդ ուղարկել Անդրկովկաս, և իրենց
կողմից խոստանում էին օգնել ուստական
բռնակալնե՝ բռնակալ սուլթանների և շահե-
րի դեմ պայքարելու համար :

Պետրոս Մեծի և Եկատերինա կայսրու-
հու ժամանակ ուստական բռնակալ շարժվեց

դեպի Անդրկովկաս: Անդրկովկասի ժողովուրդները ցնծությամբ զիմալորեցին ուսս պահծալի զորքին, որը հայ և վրացի կամավոր զորքերի օգնությամբ նախճեց Անդրկովկասի մի շարք մարդերը, ազատագրելով նրանց պարսկական լծից:

1795 թվին Աղա Մահմեդ խանը մեծ բանակով արշավեց Անդրկովկասի վրա: Շուշի քաղաքը պաշարվեց, քայց տեղացի հայերը և աղբրեջանեցիները հերոսաբար պաշտպանեցին իրենց հայրենի քաղաքը: Հետևյալ տարին ուսսական զորքը դեներալ Պոսյոմկինի հրամանատարությամբ վերափեց Բաքուն, Շամախին և Ղարաբաղը: Ռուս բանակի հետ էին Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը և հայկական կամավորական ջոկատները:

Հայ ժողովուրդն ամենուրեք ցնծությամբ զիմալորում էր իր բարեկամ մեծ Ռուսաստանի հաղթական զորքին: Հայ ժողովրդի զավակները մտնում էին ուսսական բանակի շարքերը և ցույց էին տալիս քաջության ու հերոսության օրինակներ: Ներանցից չափերը ստանում էին ռազմական պարզեաներ, չքանչաններ և զինվորական բարձր աստիճաններ:

Հայ զինվորականները հավատարմու-

թյամբ և անձնավիրաբար ծառայում էին
ռուսական բանակում, որովհետև գիտեին
և տեսնում էին, որ ռուս ժողովուրդը ի-
րենց բարեկամն է, որ նա օգնում է իրենց՝
սովթանական և պարսկական բռնակալու-
թյան դարավոր չծից ազատագրվելու հա-
մար :

Երբ Նապոլեոն I-ը 1812 թվին արշա-
վեց Ռուսաստանի վրա, ռուսական բանա-
կում ծառայող հայ զինվորականները քա-
ջաբար կռիւնքին օտար նվաճողների դեմ :

Պատմությունը թողել է մեզ մի շարք
հայ ռազմիկների անունները, որոնք չխնա-
յեցին իրենց արյունը և իրենց կյանքը՝
մարտնչելով ռուսական բանակի շարքերում
ընդդէմ Նապոլեոնի : Այդ անունների թվում
հիշատակվում են գեներալ-լեյտենանտ Դ.
Դելլյանովը, գեներալ-մայոր իշխան Աբա-
մելիքը, գեներալ Մ. Մելիքովը, որը ճա-
կատամարտում կորցրեց իր աջ թևը,
չտաք-ռոտմիտը Լադարեք և ոտամիտը
Դելլյանովը, որոնք երկուսն էլ ընկան ռազ-
մաճակատում քաջի մահով, ինչպես և ու-
րիշները :

Այս բոլորի մեջ, սակայն, անմոռաց
փառքով պատկվեց ռուս բանակի պատմու-
թյան մեջ հեծելազորի փայլուն հրամանա-

տար, խիզախ ու հնարագետ զորավար Մաղաթովի անունը :

Մաղաթովը ծնվել է 1782 թվականին : Նրա ծննդավայրն է Ղարաբաղի Վարանդա շրջանի Ավետարանոց (Չանախչի) գյուղը, որը գտնվում է Շուշի քաղաքից ոչ հեռու : Պատանի հասակում Ռոստոմին հաջողվում է Ղարաբաղի հայ մելիքների պատվիրակութան հետ միասին ուղևորվել Պետերբուրգ, որտեղ նա Պավել I կայսրի հրամանով ընդունվում է Պրեոբրաժենսկի լեյքզվարդիական գնդում իբրև սլոդսրասլոբչիկ :

17 տարեկան հասակում մտնելով զինվորական շարքերը, զարաբաղցի քաջ երիտասարդը շատ շուտ ցույց է տալիս իր ուղմական բացառիկ ընդունակութունները, կարճ ժամանակում հասնելով կապիտանի աստիճանին : 1808 թվականին ռուս-թուրքական սխտերապետ Մաղաթովի համար հանդիսացավ առաջադիմության լայն առաքարեզ :

Գտնվելով միշտ առաջավոր դիրքերում, երիտասարդ հրամանատարը իր անձնական քաջությամբ և օրինակով խանդավառում էր ռազմիկներին : Ձինվորները նրա մասին խոսում էին առանձին ակնածությամբ .

երբ ասում էին, թե «ես Մաղաթովի հետ էի գործի մեջ», այդ նշանակում էր՝ «ես գտնվում էի ամենից առաջ, մարտի տաք ժամանակ թշնամուն ամենից ավելի մոտիկ» :

Մաղաթովը մասնակցեց այն նշանավոր ճակատամարտին, որտեղ գեներալ Բադրատիոնը ջարդեց Սոսրով փաշայի կորպուսը, և իր քաջության համար պարգևատրվեց ռուսյա զենքով: Մի այլ անգամ ռուսական հեծելազորի երկու էսկադրոնով Մաղաթովը գրոհեց հակառակորդի 4 հազարանոց հեծելազորի վրա և փախստի մատնեց նրան: Այդ խիզախ գործի համար նա ստացավ Գեորգյան խաչ և փոխ-գնդապետի աստիճան:

Երբ Նապոլեոնի բանակները ներխուժեցին Ռուսաստան՝ Մաղաթովը գտնվում էր Արևմտյան երրորդ բանակում՝ գեներալ Տարմասովի հրամանատարության տակ: Մաղաթովի զորամասն առաջապահումն էր: Կոբլին քաղաքի մոտ 1812 թվի հունիսի 15-ին փոխ-գնդապետ Մաղաթովը հեծելազորի երկու էսկադրոնով անցավ թրչնամու թիկունքը և գրոհելով թշնամու ձախ թևի վրա, փախստի մատնեց Փրան-

սիական բանակի մեջ մտնող սաքսոնական
հեծելազորին և քեց մինչև քաղաք:

1812 թ. հուլիսի 31-ին Գորոդեչնո գյու-
ղի մոտ տեղի ունեցավ դվիսավոր ճակատա-
մարտը, որի ժամանակ թվով 18.000 ռու-
սական զորքը կռվում էր 40.000-անոց ա-
վրատրիական և սաքսոնական զորքերի
դեմ: Թշնամու հեծելազորի երկու գնդեր
փորձեցին չրջանցել ռուսների ձախ թևը:
Մաղաթովն առանց սպասելու, հեծելազո-
րի չորս էսկադրոնով դրոհեց հակառակոր-
դի վրա և հետ շարտեց նրան: Այս սխրա-
գործության համար նա ստացավ պնդապե-
տի աստիճան:

Մաղաթովը հետևում էր ռուս հանձա-
րեղ զորավար Սուվորովի տակտիկային,
աչխատելով իր ձեռքը վերցնել նախաձեռ-
նությունը, սրընթաց գրոհով չփոթեցնել
հակառակորդին և փոքրաթիվ ուժերով
հարձակվել, երբ դա կարող է վճուել մար-
տի հաջող ելքը:

Սկսվեց Նապոլեոնի բանակների նահան-
ջը: Ռուսական բանակը ֆելդմարշալ Կու-
տուզովի ղեկավարությամբ անցավ հակա-
հարձակման, որին նպաստում էին ռուս
ժողովրդի հերոսական պարտիզանները,
կտրելով նահանջողների ճանապարհը, ծա-

ները հարվածներ հասցնելով նրան: Գնդապետ Մաղաթովին ուղևորական հրամանատարությունը հանձնարարեց զննապետ Չերնիշովի հետ միասին հեծելազորային ուել կատարել թշնամու թիկունքում, վարչապալի գլխավորյան մեջ՝ նրա պահետները և պաշարները ոչնչացնելու նըպատակով: Այս էքսպեդիցիան կատարվեց փայլուն կերպով:

1812 թվականի նոյեմբերի 4-ին ուղևորական զորքերը հետ գրավեցին Մինսկը: Գնդապետ Մաղաթովն իր զորամասով միացավ նրանց, և ուղևորական բանակը շարժվեց դէպի Բորիսով քաղաքի մոտ գտնվող կամուրջի ամրությունները: Ռուսներն սկսեցին ընդհանուր հարձակումը, սրընթաց գրոհով վերցրին այդ ամրությունները և Բորիսովը: Ֆրանսիական մարշալ Ուդինոն չտապեց օդնության հասնել յուրայիններին, որպեսզի գրավի Բերեզինա գետի կամուրջը, որը հսկայական նշանակություն ուներ իրրի նապոլեոնյան զորքերի նահանջի գլխավոր ճանապարհը:

Նոյեմբերի 11-ին ուղևորական զորքը Ֆրանսիացիների գերակշռող ուժերի ճնշման տակ ստիպված եղավ նահանջել: Գրնդապետ Մաղաթովն իր հեծելազորային

դնգով գտնվում էր վերջապահում, պաշտպանելով ոռոսական զորքերի նահանջը: Նա հանդուգն վճիռ կայացրեց իր փոքրաթիվ հեծյալներով կասեցնել թշնամու գրոհը, որպեսզի փրկի Բերկյինա դեպի վրայի նեղ ու երկար կամրջով նահանջող ոռոսական հետևակը և հրետանին:

Մադաթովի դեմ գտնվում էր Ֆրանսիական զրահազգեստ զորքը՝ 20 թնդանոթներով, բայց խիզախ հրամանատարը չտատանվեց: Շարելով իր չորս էսկադրոնները, Մադաթովը սուրաց նրանց առջևով և նրանց ուղղեց այս հակիրճ խոսքերը. «Հուսարներ՛ր, ես սլանում եմ թշնամու վրա, եթե դուք հետ մնաք, ապա ինձ սպասում է դեպուժյուն կամ մահ: Մի՞թե դուք մի օրում ուղում եք կորցնել ձեր շտաբը պետերին»:

Ռուս քաջարի հեծյալները, առանց մի րոպե սպասելու, խոյացան իրենց հրամանատարի հետևից: Տեղի ունեցավ արյունահեղ մարտ, որը, սակայն, հնարավորություն տվեց ոռոսական զորքի անլուանդ նահանջն անպահովելու:

Մադաթովի այս սխրագործությունը հիշատակված է ուղմական պատմության մեջ: Քաջ զորավարի հրամանատարու-

Թյաթր ոռւս հեծյալները կատարած այդ
 հերոսական գործն ապացուցց է, թե ինչ-
 պիտի զարմանալի ուժ ունի քաջության օ-
 րինակը և հրամանատարի կրակոտ խոսքը :
 Նապոլեոնի ջախջախված քանակների
 վերջին մնացորդները վտարվեցին ոռւսական
 հողից : Ռուսական զորքը հետապնդելով
 նրանց, անցավ Նեման և Վիսլա գետերը .
 Գնդապետ Մադաթովը առաջիններից էր,
 որ իր զորամասով դուրս եկավ ոռւսական
 սահմաններից և առաջին անգամ ընդհա-
 րուժ ունենալով Փրանսիացիների հետ Կա-
 լիշի մոտ, հուսարների երկու էսկադ-
 րոնով ջարդեց Փրանսիական բանակի
 ուժեղ հեծյալ մի զորամաս : Սակայն այդ
 բոլորին վրա հասան սաքսոնացիները — հե-
 տեակի երկու դումարտակ խիտ հորասյուն
 կազմած : Մադաթովն առանց դուլիս կորց-
 նելու շուռ եկավ թշնամու հետևազորի
 վրա, և ոռւսական հեծյալները խրվեցին
 նրա մարտակարգերի մեջ, կոխոտելով ու
 թրատելով չափերին : Սաքսոնացիները ի-
 րենց հրամանատար գեներալ Նոտտիցի հետ
 միասին գերի հանձնվեցին : Մադաթովն
 այս փայլուն սխրագործության համար
 պարգևատրվեց Գեորգյան 3-րդ կարգի
 չքանչանով :

Այնուհետև զնդապետ Մաղաթովը մասնակցեց բաղմաթիվ մարտերի գերմանական տերիտորիայի վրա : 1813 թվի մարտ ամսին նա իր մասն ունեցալ Լալայցիդ և Դրեզդեն քաղաքների գրավման մեջ :

Կարճ զինադադարից հետո պատերազմը վերսկսվեց : Փրանսիական կայսրը նոր բանակ էր հավաքել և հաջողությամբ գերմանիայում էր դաշնակիցների զորքերին : Վերջապես տեղի ունեցալ Լալայցիդի հուլիսի 2-ին ճակատամարտը (1813 թ. հոկտեմբերի 16—19), որին մասնակցում էին շատ սղդեր, ուստի և կոչվեց «Սղդերի ճակատամարտ» :

Այս արշուևահաղ մարտում, որ տևեց երեք օր, Մաղաթովն իր հեծյալների գնդով շատ անգամ գրոհի գնաց և գրոհներից մեկի ժամանակ սաստիկ վիրավորվեց ձախթեից : Սակայն արիասիրտ հրամանատարը ձիուց վայր չիջալ և չհեռացալ ռազմադաշտից, նա շարունակեց մինչև այդ արշուևահաղ մարտի վերջը անձնական օրինակով խանգալառել և ղեկավարել իր զորքը : Դրա համար հարկավոր էր կամքի ծայրահեղ լաբում, որովհետև վերջը ժամանակին չկապվելով, նա արյան մեծ կորուստ էր ունեցել, որի հետևանքով ստիպ-

ված եղալ ամիսներով պառկած մնալ Հալ-
լէ քաղաքի հիվանդանոցում: Այս հերոսա-
կան վարմունքը Մաղաթովին 31 տարե-
կան հասակում արժանացրեց ուստական
բանակի գեներալ-մայորի աստիճանին և
Վլադիմիրի 3-րդ կարգի շքանշանին:

Մաղաթովն անհամբեր էր միանալու իր
ղորամասին: Դեռևս վերքը լրիվ չբուժված՝
նա ճանապարհ ընկալ գեպի Ֆրանսիա: Սա-
կայն ուստերադմն արդեն վերջացած էր, և
նա ուռս հաղթական զորքի հետ մտավ Փա-
րիզ: Նշանավոր 100 օրերից հետո, որոնք
ցնցեցին ամբողջ Նիքոպոլի, Նապոլեոն Ա-
ռաջինը կրկին սլարտվեց, և Ալեքսանդր Ա-
ռաջինի զորքերը կրկին մտան հռչակավոր
մայրաքաղաքը: Գլխավոր հրամանատա-
րության կարգադրությամբ Մաղաթովը
վերադարձավ Ռուսաստան և նշանակվեց
Անդրկովկասյան առանձին կորպուսի մեջ
խորհ. Ղարաբաղի մարզի զորքերի հրամա-
նատար:

Գեներալ Մաղաթովը երկար տարիների
բացակայությունից հետո կրկին տեսավ
իր հայրենի երկիրը: Նա այժմ հռչակված
զորավար էր, իշխանի բարձր տիտղոսով,
սակայն չէր մոռացել իր մայրենի բար-
բառը, նույնիսկ հաբեան ժողովրդի լե-

զուն՝ ազրբեջաններենը, որին լավ տիրապետում էր: Երկրի բարձրին լավ տեղյակ լինելը օգնում էր նրան իր ռազմական և վարչական աշխատանքում: Շուտով նա նշանակվեց Ղարաբաղի, Շիրվանի և Շաքիի ռազմա-օկրուգային պետ: Մի քանի տարի շարունակ նա հաջողությամբ կառավարեց այդ շրջանները, աշխատելով վերջ տալ ալաղակների ասպատակություններին, դարդացնել առևտուրը և դյուղատնտեսությունը, որոնք նահապետական, պրիմիտիվ վիճակի մեջ էին:

Իբրև տահմանամերձ մարզի կառավարիչ, զենեքալ Մադաթովն աշխատում էր բարեդրացիական հարաբերություններ պահպանել Իրանի հետ, և դա մասամբ հաջողվում էր նրան: Սակայն այդ ժամանակ փառասեր արքայորդի Աբաս Միրզան, հակառակ իրանական ժողովրդի շահերին, արհամարհողական քաղաքականություն էր վարում Ռուսաստանի վերաբերմամբ: 1826 թվականի ամռանը պարսկական 80 հազարանոց բանակը, Աբաս Միրզայի ընդհանուր հրամանատարությամբ, խախտելով 1813 թվին Ռուսաստանի և Իրանի միջև կնքված Գյուլիստանի պայմանագիրը, ներխուժեց Ղարաբաղ և շարժվում էր դեպի Թիֆլիս:

Մյուս կողմից շարժվեց նաև Երևանի Հասան խանը, որը նպատակ ունեւր միանալու Աբաս Միրզայի բանակին Թիֆլիսի մոտ:

Խ. Աբովյանն իր «Վերք Հայաստանի» վեպում նկարագրում է Անդրկովկասի համար սպառնալի և աղետավոր այդ ժամանակը: «Ո՞վ չգիտի, որ էս հաղաղին,— գրում է հայրենասեր վիպասանը,— ինչ ժամանակ Հասան խանը արևմտից, Աբաս Միրզեն արևելից՝ ավաղակի պես հանկարծ էկան, մեր սահմանը կոխեցին, մեր կողմը ամենևին խաբար չունեին: Ընչանք ուսաք իրանց ղորքը կհավաքեին, ղզգբաչը կարող էր սող Վրաստան ոտի տակ տալ, եթե հայք չէին ամեն տեղ նրա ճամփեն կարել: Միմիայն Ներսես ու Գրիգոր եպիսկոպոսաց, Մատթթովի ու Բեհբուզովի արածը բավական է, որ աշխարք իմանա, թե ի՞նչ հողի ունեւր էն ժամանակը մեր ազգը»:

Անդրկովկասյան կորպուսի հրամանատար դեներալ Երմոլովը, որը մեծապես զնահատում էր Մադաթովի ռաբմական փորձառությունը և անձնական քաջությունը, նրան նշանակեց հրամանատար այն ջոկատի, որը պիտի շտապեր կատեցնելու Աբաս Միրզայի բանակի առաջխաղացումը: Պարսկա-

ձևան զորքը ճանապարհին պաշարել էր Շու-
շի ամրոցը, բայց անգոր էր եղել գրավելու
այն: Քաղաքում գտնվող ուսանական փոք-
րաթիվ կայազորը, շուշեցի զինված հաշերի
հետ միասին, հերոսական դիմադրություն
ցույց տվեց Աբաս Միրզային և երկար ժա-
մանակ զբաղեցրեց նրա բանակի հիմնական
մասը:

Մինչ այդ 12 հազարանոց իրանյան կոր-
պուսը գրավելով Գանձակը (այժմ Կիրո-
վաբադ), շարժվում էր առաջ:

Գեներալ Մադաթովը ուսանական մոտ
2000-անոց ջոկատով, որի հետ կային
հայ, վրացի և ադրբեջանցի կամավորներ,
հեծյալ ու հետևակ, շտապեց հանդիպե-
լու հակառակորդին Շամքորի մոտ: Նա
վճռել էր նորից կերտել սուլտանության
տակտիկան, պաշտարանվելու փոխարեն
անցնել սրինթաց դրոշի: Հեծած իր զորա-
բազան ոսկեղույն նժույզը, գեներալ Մա-
դաթովն անցավ իր զորքերի առջև և «ու-
ռա» բացականչելով՝ նրանց տարավ դրոշի:
Այդ ժամանակ ուսանական զորքի թիկուն-
քից երևաց զուժակը, որը երկու շարք
կազմած դալիս էր սրարչավ, հեովից թող-
նելով թարմ ուղեբլուրի տղավորություն:
Դա փորձված գեներալի, ռազմական խորա-

մանկությունն էր, որը փայլուն կերպով
հաջողվեց: Ռուսական փոքրաթիվ գործը
չախջախեց Աբաս Միրզայի 12 հազարանոց
առաջագահ բանակը, որի հրամանատարը՝
Ամիր խան Սարգսրը կռվում սպանվեց:

Շամքորի հաղթանակը շահեցնող տալ-
վորություն դործեց Աբաս Միրզայի վրա:
Նա շտապեց թողնել Շուշու պաշարումը
և առաջ շարժվեց գեներալ Մաղաթովի
զորամասերի դեմ: Երկու բանակների հան-
դիպումը տեղի ունեցավ Գանձակի մոտ:
Այդ ժամանակ ռուսական զորքի ընդհա-
նուր հրամանատար էր նշանակվել գեներալ
Պասկևիչը, որը օգնական զորքով եկի
էր Գանձակի ռազմաճակատը:

Վերջապես տեղի ունեցավ Գանձակի
նշանավոր ճակատամարտը, որտեղ ռուսա-
կան ընդամենը 8 հազարանոց զորքը չար-
չար պարտության մատնեց Աբաս Միրզա-
յի մոտ 50 հազարանոց բանակը: Գեներալ
Մաղաթովն այս ճակատամարտում խաղաց
վճռական դեր: Հաղապարհի մնալով մեծ
Սուլթանովի տրադիցիաներին, նա ռուսա-
կան պանծալի զորքին տարավ սվինամար-
տի, իսկ հեծերազորին հրամայեց հետապըն-
դել փախչող հակառակորդին:

Աբաս Միրզայի զորքը ջախջախված



էր, փառամով Շահադէն ընդմիջտ հրա-
ժարվեց իր նվաճողական ծրագրերից,
Գանձակի մօտ ստանալով անմոռանալի մի
դաս:

Շամքուրի և Գանձակի հաղթանակները
հանդիսանում են Անդրկովկասի պատմու-
թյան նշանավոր իրադարձությունները,
որտեղ իր անունը փառքով պատկեց հայազ-
ղի զորավար Մաղաթովը: Գանձակի հաղ-
թանակի համար նա ստացավ զենեքով-
լեյտենանտի աստիճան:

10. Արովյանը հիշելով Մաղաթովի այդ
սխրագործությունները, գրում է. «Ո՛վ էն
ժամանակը կամ տեսած կամ լսած կլինի,
թե Մատաթովն ի՛նչ արեց, նհախ տեղը
չի՛ նրա անունը հայի, թուրքի, զլբաչի
բերնումը մնացել: Աշխարք տակ ու վեր
կըլի, բայց նրա հիշատակը անջնջելի կմնա
մեր ազգի միջին ու մեր աշխարքումը»:

Երբ սկսվեց 1828 թ. ռուս-թուրքական
պատերազմը, զենեքավ-լեյտենանտ Մաղա-
թովը նշանակվեց Բալկաններում զործույ
ռուսական բանակի մեջ: Այստեղ ևս նա,
իբրև գեմլիդիայի հրամանատար, կատարեց
մի շարք քաջագործություններ, որոնց մեջ
նշանավոր է այն մարտը, երբ նա իր ան-
երկյուղ հեծյալներով դրոհեց թուրքական

ամբուլթյունների վրա, մի գործողութիւն,
որ հաղվադեպ է ռազմական պատմութեան
մեջ:

Այս գործի համար նա պարզեցնում է
Ալեքսանդր Նևսկու շքանշանով: Մակայն
այդ եղանակով նրա վերջին ռազմական փայլուն
գործողութիւնը: Երբ արդեն սկսվել էին
հաշտութեան բանակցութիւնները, անվերջ
արշավանքներից, ստացած վերքերից քայ-
քայված առողջութիւնն այլևս չդիմացավ:
Գեներալ Մազաթովը 47 տարեկան հաս-
կում միախճանվեց ռազմաճակատում, բայց
ոչ թշնամու գնդակով, այլ մարտական
պոստում՝ պառկած իր կովկասյան յայինու-
վրա, կողքին իր ղարաբաղյան մարտական
նժույդը: Նրա աճյունը տեղափոխվեց Պե-
տերբուրգ և թաղվեց Ալեքսանդր Նևսկու
վանքում, որտեղ հանգչում էր մեծ Սուլթ-
անովը:

Նա իր ողջ կյանքն անցկացրեց պա-
տերազմների մեջ, մարտերի բովում, միշտ
գտնվելով առաջավոր դիրքերում, իր զոր-
քի առաջ: Նա անսահման հավատ ունեւր
դեպի ռուսական պանծալի բանակը և վստահ
էր, որ նրա հետ նա երբեք չի պարտվի:
Այդ նա կրկնում էր միշտ, երբ գրեհ էր
տանում իր քաջերին. «Դուք, ռուս ռազ-

միկնե՛ր, — ասում էր նա, — ձեզ հետ ես երբեք չեմ պարտվի»։ Զինվորներն իրենց կողմից սիրում էին նրան, գիտեին, որ նրա հետ «իրենք երբեք չեն կորչի»։

Նրա անձնական քաջությունն առասպելական էր։ 1812 թվի հայրենական պատերազմի հռչակալուր հերոս պարտիզան Դենիս Դավիդովը, որն անձամբ ճանաչում էր Մադաթովին, նրա անվահերությունը անվանում է «անհավատարիության սոսորձան»։ Նա չէր ընկրկում ոչ մի վտանգի առջև, այլ իր վճիռների մեջ հանդուգն՝ արտակարգ արագությամբ իրազործում էր իր տակտիկական մտադրությունները, հանկարծակիի բերելով թվով զերաչափ հակառակորդին։ Իբրև զորավար, նա գիտեր խանդավառել ուս գլխավորների բնածին արիությունը, միշտ գտնվելով նրանց կողքին, նրանցից անբաժան։

Ծնված լինելով հայ ժողովրդի ծոցում, ժառանգելով իր նախնիների քաջությունը, Մադաթովը պատանի հասակից ընտելացավ ուս մեծ ժողովրդին, նրա լեզվին ու կուլտուրային, որոնք հարազատ ու սիրելի էին իր հայրենակիցներին։ Նա համոզված էր, որ հայ ժողովրդի փրկությունը, իր սիրելի ծննդավայրի ու հարազատների բարօ-

բությունը մեծապէս կապւած են ոուս ժողովրդի հետ դարերից ի վեր հաստատուած սերտ բարեկամության հետ: Եվ նա ոչինչ չխնայեց, նույնիսկ իր կյանքը, այդ բարեկամությունը պահպանելու համար:


Մինչև իր կյանքի վերջը նա պահեց լեոնասկանի իր պարզությունը: Չնայած իր իշխանական քարձր տիտղոսին և աստիճանին, նա իր ստորադրյալներին հետ վարվում էր քաղցրութեամբ, ամենածանր բոսկներին սրախոտում, կատակում էր նրանց հետ: Պահպանելով զինվորական ամենախիստ զխցիպլինան, նա միաժամանակ գիտեր հարկ եղած դեպքում հալածարների պէս վարվել զինվորների հետ: Նա սիրում էր ուսն զինվորի ուրախ բնավորությունը, նրա մարտական երգերը, խրոխտ արհամարհանքը դեպի մահը, որը հաճախ դարմացրել է ամբողջ աշխարհը:

Գեներալի և շարքային ռազմիկի միջև տեղի ունեցած մտերմական խոսակցությունները ապացույց են ուսն բանակի ուղու արիւթյան և ամենածանր բոսկներին անդամ զխարթ կատակը չմոռանալուն: Նրման մարտիկներից բաղկացած բանակը իր քաջարի հրամանատարների ղեկավարութեամբ երբեք չի կարող պարտվել: Վերջի վերջո նրանք կլինի հաղթանակը:

Այսօր, երբ հերոսական կարմիր Բանա-
կը, ողեջնջված անցյալի մեծ տրադիցիա-
ներով, ռուս մեծ ժողովրդի և եղբայրա-
կան մյուս ժողովուրդների դյուցազնական
անցյալով, մահացու հարվածներ է հասցը-
նում 20-րդ դարի ճիվաղներին, մենք կըր-
կին հիշում ենք այն քաջարի զորավարնե-
րին, որոնք Սուվորովի և Կուտուզովի օրի-
նակով գիտեին արթնացնել ու խանդավա-
ռել ժողովրդի դյուցազնական զավակների
ցասումն ու ատելությունը թշնամիների
դեմ, որոնք իրենց անձնական օրինակով
ողեջնջում էին նրանց հերոսական տրարք-
ների:

Անպարտելի է այն ժողովուրդը, որ
անցյալի նման հերոսական տրադիցիաներ
ունի: Անպարտելի են այն ժողովուրդնե-
րը, որոնք ռուս մեծ ժողովրդի գլխավո-
րությամբ, նրա հետ կողք-կողքի և անբա-
ժան՝ վերջին, վճռական մարտ են մղում
հիտլերյան զազանների դեմ:

Հայ ժողովրդի քաջարի զավակները
անձնվիրաբար մասնակցելով Հայրենական
մեծ պատերազմին, չեն մոռանում իրենց
պանծալի նախորդներին, նրանց թվում
քաջամարտիկ պետերազմային (Ռու-
սում) Գրիգորեի Մադաթովին:



ՎՖ 0135, պատվեր 835, տիրած 4000.

1,5 տպ. մամուլ, մամուլում 19200 տպանիշ:

Ստորագրված է. 14 դեկտեմբերի 1942 թ.:

ՀՍՍՌ ժողովման վեհաժողովի կից քերթերի և ամսագրերի տպարան, Երևան.

Армянский филиал Академии наук СССР

Боевые подвиги сынов Армении

В. ТЕРЗИБАШЯН

Генерал-лейтенант

В. Г. МАДАТОВ

(На армянском яз.)

Изд. Армфан

Ереван, 1942

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0612869